600.0303.02.09.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ

ՈՐՈՇՈՒՄ

2 սեպտեմբերի 2020 թվականի № 303Ա
ք. Երևան

«ՋԻՆՋ-ԱՐՓԱ ՀԻԴՐՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2020 թվականի մայիսի 20-ի №169Ա որոշման 2-րդ կետով «ՋԻՆՋ-ԱՐՓԱ ՀԻԴՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ ընկերություն) պարտավորեցվել է նշված որոշումն ուժի մեջ մտնելու պահից (2020 թվականի հուլիսի 11-ից) քառասունհինգօրյա ժամկետում՝ մինչև 2020 թվականի օգոստոսի 17-ը, հանձնաժողով ներկայացնել 6 775 000 (վեց միլիոն յոթ հարյուր յոթանասունհինգ հազար) դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2022 թվականի մայիսի 8-ը գործողության ժամկետով, ինչը մինչ օրս չի կատարվել,

բ) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, սույն թվականի օգոստոսի 18-ին ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Հանձնաժողովի 2020 թվականի մայիսի 20-ի №169Ա որոշման 2-րդ կետով նախատեսված պարտավորության խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 18-ի №ԳԲ/34.1-Մ2-5/3502-2020 գրությամբ,

գ) ընկերությունը 2020 թվականի օգոստոսի 25-ին հանձնաժողով է մուտքագրել գրություն, որով վկայակոչելով №ՎԴ/4540/05/20 վարչական գործի առկայությունը՝ պնդել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի հիմքով հարուցված վարչական վարույթի կասեցման անհրաժեշտության մասին,

դ) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող

վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը,

ե) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի վարույթում է գտնվում ընկերության հայցն ընդդեմ Հանձնաժողովի՝ մասնակիորեն, այն է՝ քառասունհինգօրյա ժամկետում 6.775.000 ՀՀ դրամ գումարի երաշխիք ներկայացնելու պարտականություն ընկերության համար սահմանելու մասով (որոշման 2-րդ կետ) Հանձնաժողովի 2020 թվականի մայիսի 20-ի №169-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին (վարչական գործ №ՎԴ/4540/05/20): Հանձնաժողովի գնահատմամբ 2020 թվականի օգոստոսի 18-ից ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթի հետագա ընթացքն ուղղակիորեն կախված է նշված դատական գործի քննության ելքից, քանի որ տվյալ դատական գործով հայցի առարկան 2020 թվականի մայիսի 20-ի №169Ա որոշման այն կետի վիճարկումն է, որի խախտման փաստով հենց հարուցվել է սույն վարչական վարույթը, ուստիև նման պայմաններում անհնարին է վարչական վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև հիշյալ դատական գործով վերջնական դատական ակտի կայացնելը,

հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետը և 60-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կասեցնել ընկերության նկատմամբ 2020 թվականի օգոստոսի 18-ից հարուցված վարչական վարույթը՝ մինչև վարչական դատավարության կարգով քննվող №ՎԴ/4540/05/20 գործով վերջնական դատական ակտի կայացումը:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի սեպտեմբերի 3-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Ս. ԱՂԻՆՅԱՆ**

ք. Երևան
02 սեպտեմբերի 2020թ.